

2011-2012թ. ՄՏԱՎՈՐ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ ԴԱՏԱԽԱՂԻ
ԽՆԴԻՐԸ

«AIZNAL» GmbH-ն ընդդեմ «Ինիկում» ՍՊԸ-ի

«AIZNAL» GmbH ընկերությունը (այսուհետ՝ «Հայցվոր») և «Ինիկում» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Պատասխանող») (երկուսը միասին՝ «Կողմեր») կնքել են արբիտրաժային գրավոր համաձայնություն՝ իրենց միջև առկա սույն վեճը արբիտրաժային տրիբունալի լուծմանը հանձնելու վերաբերյալ:

Կողմերի համաձայնությամբ ձևավորվել է երեք արբիտրներից կազմված արբիտրաժային տրիբունալ, որոնք սույն գործը լսելու են Հայաստանի մայրաքաղաք Երևանում:

Կողմերը նաև համատեղ լիազորել են արբիտրաժային տրիբունալին սույն վեճը լուծել արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա (ex aequo et bono)՝ կիրառելով տվյալ ոլորտը կարգավորող ինչպես ՀՀ օրենսդրությունը, այնպես էլ՝ միջազգային այլ կոնվենցիաները, համաձայնագրերը, պայմանագրերը և դրանցից բխող և (կամ) դրանց չհակասող միջազգային առաջատար փորձը (տվյալ բնագավառում զարգացած իրավական համակարգ և հարուստ դատական փորձ ունեցող պետությունների ներպետական օրենսդրությունը և դատական փորձը):

Կողմերը համաձայնվել են չվիճարկել այն հարցը, թե արդյո՞ք սույն վեճը կամ դրա որևէ մի մաս ենթակա է ազգային (ներպետական) որևէ դատարանի քննության:

Կողմերն, իրենց համատեղ գրավոր համաձայնությամբ, արբիտրաժային տրիբունալին ներկայացրել են սույն գործին առնչվող հետևյալ անվիճարկելի փաստերը:

Փ Ա Ս Տ Ե Ր

1 Հայցվոր «AIZNAL» GmbH ընկերությունը գերմանական ընկերություն է, որը
2 գրադվում է դեղերի արտադրությամբ՝ սկսած 1905թ.-ից: Վերջին 20 տարիների
3 ընթացքում, Հայցվորը Եվրոմիության բոլոր 27 պետություններում, ինչպես նաև ԱՄՆ-ում,
4 Ավստրալիայում և Ճապոնիայում շարունակաբար արտոնագրեր (պատենտներ) է
5 ստացել իր նոր դեղերի և վիտամինների համար, ինչպես նաև գրանցել մի շարք
6 ապրանքային նշաններ:

7 Հայցվորի վերջին վիտամիններից մեկը, որից, որպես կանոն, օգտվում են
8 կուլտուրիզմով (bodybuilding) զբաղվող անձինք, մեծ սպառում ունեցավ ողջ աշխարհում
9 «FLEGON» և «AIZNAL» բառային ապրանքային նշաններով: Հայցվորն իր FLEGON և
10 AIZNAL նշանները ևս գրանցել է վերոգրյալ 3-4 տողերում նշված պետություններում
11 ԱՕՄԴ-ի¹ 5-րդ դասով, և այն մինչ օրս ուժի մեջ է բոլոր այդ պետություններում:

12 FLEGON վիտամինի շնորհիվ ինչպես FLEGON, այնպես էլ AIZNAL ապրանքային
13 նշանները, հայտնի դարձան տվյալ տեսակի վիտամիններից օգտվող անձանց
14 շրջանակներում՝ վերոգրյալ բոլոր պետություններում: FLEGON-ը, տվյալ տեսակի
15 վիտամիններից օգտվող անձանց շրջանակներում, բավականին հայտնի է նաև
16 Հայաստանում՝ սկսած 1991թ.-ից:

17 Գերմանական «AIZNAL» ընկերության նոր դեղամիջոցները և վիտամինները (այդ
18 թվում և FLEGON-ը) այլ ընկերությունների դեղամիջոցներից և վիտամիններից
19 հիմնականում տարբերվում են նրանով, որ դրանց հետ տրվում է լազերային սկավառակի
20 (այսուհետ՝ «CD») վրա ամրագրված (ձայնագրված) հատուկ համակարգչային ծրագիր
21 (այսուհետ՝ «Ծրագիր»), որի միջոցով օգտագործողը (իր մասին որոշ տվյալներ
22 մուտքագրելուց հետո) կարողանում է որոշել կոնկրետ իր համար անհրաժեշտ

¹ Ապրանքների և Ծառայությունների Միջազգային Դասակարգիչ (1957թ. հունիսի 15-ի Նիցցայի համաձայնագիր):

23 դեղորայքի կամ վիտամինի չափաբաժինը և դրանք ընդունելու կարգի և պայմանների
24 մասին այլ տեղեկություններ՝ առանց դիմելու որևէ բժշկական հաստատության կամ
25 բժշկի: Ծրագիրը նաև նշում է, թե տվյալ սպառողի համար դեղորայքը կամ վիտամինն
26 ինչպիսի հակացուցումներ ունի և ինչպիսի բացասական հետևանքներ կարող է
27 առաջացնել: Ծրագիրն օգտագործվում է նաև տարբեր դեղատների և բժշկական
28 հաստատությունների կողմից, որի միջոցով խորհրդատվություն է տրվում այն անձանց,
29 ովքեր, որևէ պատճառով, համակարգչից չեն օգտվում:

30 Ծրագիրն աշխատում է բացառապես ինտերնետի կապի առկայության դեպքում,
31 որի միջոցով այն նաև պարբերաբար ստուգվում և պաշտպանվում է տարբեր տեսակի
32 վիրուսներից և այլ անսարքություններից: Ծրագիրը միացնելուն պես, այն
33 ինքնաբերաբար կատարում է ինքնաստուգում՝ թարմացնելով Ծրագիրը և վերացնելով
34 բոլոր առկա վիրուսները և ծրագրային որևէ թերությունները (անսարքությունները), եթե
35 այդպիսիք առաջացել կամ ներթափանցել են Ծրագրի մեջ: Միայն ստուգումն
36 ավարտելուց հետո, Ծրագիրը թույլ է տալիս սպառողին օգտագործել այն և ստանալ իրեն
37 հետաքրքրող տվյալները և պատասխանները: Այս ինքնաստուգումն ունի մի քանի
38 նպատակ: Դրանցից առավել կարևորները հետևյալն են.

39 1. որպեսզի Ծրագրի որևէ անսարքության կամ վիրուսի պատճառով և (կամ)
40 հետևանքով սպառողները չստանան որևէ սխալ տեղեկատվություն, որի օգտագործումը
41 կարող է բացասաբար ազդել վերջիններիս առողջության վրա,

42 2. որպեսզի կանխվի և (կամ) վերացվի բոլոր այնպիսի հնարավոր հակերային
43 հարձակումները Ծրագրի վրա, որի միջոցով և (կամ) հետևանքով կարող է հնարավոր
44 դառնալ անձանց վերաբերող անհատական տվյալների անօրինական ձեռքբերումը կամ
45 տվյալների բազաների վնասումը (հատկապես, երբ խոսքը վերաբերում է դեղատներին և
46 բժշկական հաստատություններին):

47 Այս Ծրագրի միջոցով սպառողը կարող է նաև առցանց (online) ռեժիմով մի շարք
48 լեզուներով (այդ թվում անգլերեն և ռուսերեն) անմիջական անվճար խորհրդատվություն
49 ստանալ ինչպես Ծրագրի տեխնիկական սպասարկողների, այնպես էլ Հայցվորի,
50 դեղագործների և բժիշկների կողմից:

51 Ծրագրի ինքնաստուգման ֆունկցիան սպառողի (օգտագործողի) կողմից չի կարող
52 անջատվել, քանի որ Ծրագրի անխափան աշխատանքի ապահովման նպատակով,
53 Ծրագրում ինքնաստուգման ֆունկցիան անջատելու հնարավորություն սպառողի համար
54 նախատեսված չէ: Այն կարող է անջատվել բացառապես Ծրագրի կողերի մեջ հատուկ
55 միջամտություն կատարելու, այսինքն՝ դրանցում փոփոխություններ կատարելու
56 արդյունքում, որը պահանջում է հատուկ մասնագիտական (ծրագրավորողի) գիտելիքներ:

57 Ինքնաստուգման ընթացքում համակարգչային ծրագիրը նաև ստուգում է, արդյո՞ք
58 տվյալ Ծրագիրը լիցենզիոն է (իրավատիրոջ կողմից արտադրված, այսինքն՝ չկեղծված)
59 թե՛ ոչ: Եթե այն հայտնաբերում է, որ Ծրագիրը լիցենզիոն չէ, ապա 1) սպառողին
60 տեղեկացնում է այդ մասին, 2) նախազգուշացնում է գնված դեղորայքի կամ վիտամինի
61 հնարավոր կեղծ լինելու մասին, և 3) խափանում է տվյալ Ծրագրի բնականոն
62 աշխատանքը, որի արդյունքում սպառողն այլևս չի կարողանում օգտվել այդ Ծրագրից:

63 1993թ.-ից, երբ FLEGON վիտամինի արտոնագրի (պատենտի) ժամկետը դեռևս չէր
64 ավարտվել, Չինաստանում և Հնդկաստանում ջեներիկ (generic) վիտամիններ արտադրող
65 ընկերությունները սկսեցին մեծ ծավալով արտադրել և սպառել FLEGON վիտամինը
66 տարբեր ապրանքային նշաններով՝ առանց օգտագործելու FLEGON կամ AIZNAL
67 ապրանքային նշանները, սակայն գովազդելով, որ իրենց վիտամինը նույն FLEGON
68 վիտամինն է իր ողջ բաղադրությամբ, պարզապես արտադրվում է այլ
69 կազմակերպությունների կողմից: FLEGON վիտամինը, FLEGON ապրանքային նշանով,

70 շարունակվում էր արտադրվել և վաճառվել միայն գերմանական AIZNAL ընկերության
71 կողմից:

72 1993թ.-ի վերջերին, Պատասխանող «Ինիկում» ՍՊԸ-ն առաջին ընկերությունն էր
73 Հայաստանում, որը սկսեց զբաղվել FLEGON վիտամինի արտադրությամբ Հայաստանի
74 տարածքում: ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր թույլտվությունները ձեռք բերելուց
75 հետո, Պատասխանողն արտադրեց և սկսեց վաճառել վիտամինը Հայաստանի մի շարք
76 դեղատների միջոցով՝ առանց օգտագործելու FLEGON և AIZNAL ապրանքային
77 նշանները:

78 Պատասխանողը գրեթե ոչ մի հաջողության չհասավ հայկական շուկայում, քանզի
79 սպառողները չէին գնում Պատասխանողի վիտամինը նույնիսկ այն դեպքում, երբ
80 դեղատան աշխատակիցները սպառողներին բացատրում և վստահեցնում էին, որ այս
81 վիտամինն իր ողջ բաղադրությամբ ամբողջովին նույն AIZNAL գերմանական
82 ընկերության FLEGON վիտամինն է, պարզապես արտադրվում է այլ ընկերության
83 կողմից: Սպառողներին չէր գրավում նույնիսկ տեղական այդ վիտամինի կրկնակի
84 անգամ ավելի էժան գինը: Մինչև 1994թ.-ի հունիս ամիսը Պատասխանողին հաջողվեց
85 վաճառել ընդամենը 58 վիտամին, մինչդեռ այն արդեն հասցրել էր արտադրել 10,000-ից
86 ավել վիտամին՝ հույս ունենալով, որ դրանք արագ սպառում կունենան Հայաստանում:

87 1995թ.-ի մայիսին, երբ Պատասխանողին հաջողվել էր վաճառել ընդհանուր թվով
88 մոտ 100 վիտամին, նա երկու ապրանքային նշանների գրանցման հայտ ներկայացրեց ՀՀ
89 Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն (այսուհետ՝
90 «Գործակալություն»), որն արդյունքում Պատասխանողի անունով գրանցեց AIZNAL և
91 FLEGON բառային ապրանքային նշանները ԱՕՄԴ-ի 5-րդ դասով: Պատասխանողի
92 հայտը ներկայացնելու դրությամբ Հայցվորի ապրանքային նշանները Հայաստանում
93 գրանցված չէին:

94 Պատասխանողի կողմից իր վիտամինների վրա AIZNAL և FLEGON անուններն
95 օգտագործելուց մի քանի ամիս անց, Պատասխանողի վիտամինները սկսեցին շատ արագ
96 սպառվել (այդ թվում մի շարք դեղատների և գրեթե բոլոր բժշկական
97 հաստատությունների կողմից), իսկ 2005թ.-ի դեկտեմբեր ամսվա դրությամբ արդեն
98 սպառվել էր Պատասխանողի վիտամինների ավելի քան 90 տոկոսը: Այս ամենը
99 վերլուծելուց հետո, Պատասխանողը մի քանի անգամ ավելացրեց իր արտադրության
100 ծավալները և “AIZNAL” ու “FLEGON” բառային ապրանքային նշանները Ռուսաստանում
101 և ԱՊՀ բոլոր այլ երկրներում գրանցելուց անմիջապես հետո, սկսեց արտահանել և
102 հաջողությամբ սպառել իր FLEGON վիտամինները նաև այդ շուկաներում:

103 Հայցվորն այս ամենի մասին տեղեկացավ 2009թ.-ին: 2010թ.-ին Հայցվորը դիմեց ՀՀ
104 մտավոր սեփականության գործակալություն AIZNAL, FLEGON և իր 5 (հինգ) այլ
105 ապրանքային նշանները գրանցելու համար, սակայն AIZNAL և FLEGON ապրանքային
106 նշանների գրանցումը մերժվեց՝ Պատասխանողի կողմից ավելի վաղ գրանցած
107 նույնական նշանների առկայության հիմքով: Հայցվորը Գործակալությանն ուղղեց իր
108 պատասխանը՝ չհամաձայնվելով Գործակալության դիրքորոշման հետ և խնդրեց
109 անցկացնել կրկնական փորձաքննություն՝ պատճառաբանելով, որ Պատասխանողը ոչ
110 բարեխիղճ մրցակցության մեջ է մտել Հայցվորի հետ և անբարեխիղճ ձևով է գրանցել
111 AIZNAL և FLEGON ապրանքային նշանները Հայաստանում: Հայցվորի խնդրանքով
112 Գործակալությունն անցկացրեց կրկնական փորձաքննություն, սակայն չփոխեց իր
113 նախկին դիրքորոշումը՝ նշելով, որ Պատասխանողի ապրանքային նշանները գրանցվել
114 են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ անբարեխիղճության հետ կապված
115 հարցերը, 2010թ.-ին ընդունված Ապրանքային նշանների մասին ՀՀ նոր օրենքի
116 համաձայն, պետք է լուծվեն դատական կարգով:

117 2011թ.-ի մայիսին, Հայցվորը Պատասխանողից պահանջեց դադարեցնել FLEGON
118 վիտամինների արտադրությունը և արտահանումը, ինչպես նաև՝ դադարեցնել AIZNAL և
119 FLEGON ապրանքային նշանների օգտագործումը ԱՊՀ ողջ տարածքում: Պատասխանողը
120 որևէ կերպ չարձագանքեց Հայցվորի այս պահանջին:

121 2011թ.-ի հունիսին, Հայցվորը ԱՊՀ ողջ տարածքում գործող գրեթե բոլոր հանրային
122 հեռուստատաղիո ընկերությունների միջոցով տարածեց մի տեղեկատվություն,
123 համաձայն որի Պատասխանողի կողմից վաճառվող բոլոր այն վիտամինները, որոնք
124 կրում են AIZNAL և FLEGON ապրանքային նշանները, վտանգավոր են առողջության
125 համար և կարող են լրջորեն վնասել օգտագործողների առողջությանը: Իր այս
126 հայտարարությունը Հայցվորը, մասնավորապես, հիմնավորում է այն պնդմամբ, որ
127 FLEGON վիտամիններն արտադրելիս AIZNAL ընկերությունն օգտագործում է մի շարք
128 առևտրային գաղտնիքներ, որոնք ոչ մի այլ ընկերության հայտնի չեն և բոլոր ջեներիկ
129 դեղեր արտադրող ընկերությունները, այդ թվում և Պատասխանողը, չնայած
130 օգտագործում են նույն բաղադրիչները, այնուամենայնիվ, առանց հասկանալու,
131 արտադրում են առողջության համար վնասակար վիտամիններ, քանզի տեղյակ չեն և չեն
132 պահպանում Հայցվորի առևտրային գաղտնիքով պաշտպանվող FLEGON վիտամինների
133 արտադրության համար մշակված հատուկ ընթացակարգերը: Բացի այդ, Հայցվորը՝
134 հիմք ընդունելով մի քանի քաղաքացիների կողմից ստացված բողոքները, նշեց, որ
135 Պատասխանողի կողմից տրամադրվող համակարգչային ծրագրերը հանդիսանում են
136 Հայցվորի համակարգչային ծրագրի պիրատական վերարտադրությունը, որն ի
137 տարբերություն Հայցվորի կողմից տրամադրվող Ծրագրերի, ինքնաստուգում չի
138 իրականացնում, քանզի այդ ֆունկցիան Պատասխանողի կողմից անջատվել է: Հայցվորը
139 նաև մեղադրեց Հայաստանի ոստիկանությանը անգործության մեջ:

140 2011թ.-ի հունիսին արված Հայցվորի վերոգրյալ հայտարարությունների
141 կապակցությամբ, Պատասխանողը լրատվության նույն միջոցներով պատասխանեց, որ
142 Հայցվորը՝ տեղեկանալով Պատասխանողի ձեռքբերումների մասին, պարզապես
143 նախանձում է և ցանկանում է խափանել Պատասխանողի օրինական գործունեությունը՝
144 կեղծ և չհիմնավորված տեղեկություններ տարածելով Պատասխանողի գործունեության և
145 վերջինիս կողմից սպառվող վիտամինների վերաբերյալ: Հայցվորի
146 հայտարարություններին արձագանքեց նաև Հայաստանի ոստիկանությունը:
147 Մասնավորապես, մամլո ասուլիսներից մեկի ժամանակ լրագրողների կողմից
148 բարձրացված հարցին ոստիկանության աշխատակիցը պատասխանեց, որ ՀՀ
149 օրենսդրության համաձայն, ոստիկանությունը կարող է ձեռնարկել օրենքով
150 նախատեսված համապատասխան միջոցներ ենթադրյալ իրավախախտների դեմ, միայն
151 հեղինակային իրավունքների կամ ապրանքային նշանի իրավատիրոջ կամ վերջինիս
152 Հայաստանյան ներկայացուցչի (հատկապես, երբ իրավատերը արտերկրյա քաղաքացի
153 կամ ընկերություն է) գրավոր դիմումի հիման վրա, և նման դիմումի առկայության
154 դեպքում ոստիկանությունը պատրաստ կլինի ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ
155 նախատեսված համապատասխան միջոցներ:

156 2011թ.-ի հուլիս ամսից սկսած, Պատասխանողը դադարեցրեց իր վիտամինների
157 հետ որևէ CD-ի տրամադրումը՝ փոխարենը տրամադրելով տպագրված
158 տեղեկատվություն վիտամինների և դրանց չափաբաժինների օգտագործման վերաբերյալ
159 տարբեր տարիքային խմբերի համար, ինչպես նաև նշելով մի շարք այլ
160 տեղեկատվություն, որը սպառողները կարող էին ստանալ՝ օգտագործելով
161 համակարգչային ծրագիրը: Հայաստանում վաճառվող վիտամինների հետ այս
162 տեղեկատվությունը տրվում է հայերեն լեզվով: Պատասխանողի կողմից տրամադրվող

163 այս տեղեկատվության 25 (քսանհինգ) տոկոսը համընկնում է Հայցվորի Ծրագրում առկա
164 տեղեկատվության հետ:

165 2011թ.-ի հուլիսի վերջերին, Հայցվորն անարգել մուտք գործեց հայկական շուկա իր
166 ողջ ապրանքատեսակով և սկսեց օգտագործել իր բոլոր ապրանքային նշանները (այդ
167 թվում AIZNAL և FLEGON նշանները): Պատասխանողը փորձեր կատարեց արգելելու
168 AIZNAL-ի մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք մաքսային մարմինների
169 միջոցով՝ պնդելով, որ AIZNAL և FLEGON ապրանքային նշանները կրող իր
170 ապրանքներով մուտք գործելով Հայաստան, AIZNAL ընկերությունը կխախտի
171 Պատասխանողի գրանցված ապրանքային նշանները և անբարեխիղճ մրցակցության մեջ
172 կմտնի Պատասխանողի օրինական գործունեության հետ: Չնայած այս պնդումներին, ՀՀ
173 մաքսային մարմինները որևէ արգելք չստեղծեցին Հայցվորի համար, քանի որ
174 Պատասխանողը նախապես, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, դիմում չէր
175 ներկայացրել ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ ՀՀ
176 մաքսային մարմինների կողմից իր մտավոր սեփականության օբյեկտների գրանցման
177 վերաբերյալ և ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի
178 մտավոր սեփականության օբյեկտների գրանցամատյանում որևէ գրառում չկար
179 Պատասխանողի ապրանքային նշանների վերաբերյալ: Այդ իսկ պատճառով, մաքսային
180 մարմինները չկարողացան Պատասխանողին ՀՀ Մաքսային օրենսգրքով նախատեսված
181 օժանդակություն ցուցաբերել՝ իրեն պատկանող ապրանքային նշանների նկատմամբ
182 իրավունքների պաշտպանության հարցերով:

183 Պատասխանողը շարունակում էր իր բոլոր սպառողներին համոզել և հիմնավորել,
184 որ իր վիտամինները ոչնչով չեն տարբերվում Հայցվորի վիտամիններից:
185 Պատասխանողը նաև կոչ էր անում աջակցել տեղական արտադրողին, այլ ոչ թե գնել
186 արտերկրյա նմանատիպ վիտամինները և Հայաստանի դրամն ուղարկել արտերկիր՝

187 աղքատացնելով Հայաստանը և առավել հարստացնելով արդեն իսկ հարուստ
188 պետություններին: Հայցվորը, մյուս կողմից, շարունակում էր պնդել, որ անարգելով և
189 նման եղանակներով խախտելով արտերկրյա իրավատերերի մտավոր սեփականության
190 իրավունքները և անբարեխիղճ ձևերով մրցակցելով վերջիններիս հետ, Հայաստանն իրեն
191 մեկուսացնում է քաղաքակիրթ և մտավոր սեփականության իրավունքներ հարգող
192 աշխարհից՝ լրջորեն վնաս հասցնելով Հայաստանի վարկանիշին, որն իր հերթին
193 բացասական մեծ ազդեցություն կունենա Հայաստանում մի շարք այլ բնագավառների
194 զարգացման (այդ թվում գիտության և միջպետական գիտական համագործակցության)
195 վրա:

196 2011թ.-ի սեպտեմբերին, մտավոր սեփականության իրավունքների խախտման
197 վերաբերյալ մի շարք փոխադարձ մեղադրանքներ ներկայացնելուց հետո, Հայցվորը և
198 Պատասխանողը եկան ընդհանուր համաձայնության, այն է՝ իրենց միջև
199 տարաձայնությունների լուծումը հանձնել առևտրային արբիտրաժին, իսկ
200 Պատասխանողը պարտավորվել է դադարեցնել վիճարկվող ապրանքային նշանների
201 օգտագործումը, եթե արբիտրաժը վճռի, որ Պատասխանողը խախտել է Հայցվորի
202 Հայաստանում ունեցած իրավունքները և (կամ) այլ օրինական շահերը:

203

204

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

205

ՀԱՅՅՎՈՐԸ, Կողմերի համաձայնությամբ ձևավորված, արբիտրաժային

206

տրիբունալին խնդրում է վճռել, որ Պատասխանողը.

207

1. խախտել է և շարունակում է խախտել Հայցվորի հեղինակային իրավունքները,

208

2. անբարեխիղճ եղանակներով ձեռք է բերել Հայցվորի ապրանքային նշանները

209

Հայաստանում օգտագործելու իրավունք և պարտավոր է դադարեցնել այդ

210

նշանների օգտագործումը,

211

3. անբարեխիղճորեն մրցակցում է Հայցվորի հետ հայկական շուկայում՝

212

վերոգրյալ 2-րդ կետում նշված իրավախախտման հետևանքով:

213

ՊԱՏԱՍԽԱՆՈՂԸ, Կողմերի համաձայնությամբ ձևավորված, արբիտրաժային

214

տրիբունալին խնդրում է վճռել, որ.

215

1. Պատասխանողը երբևէ չի խախտել և չի խախտում Հայցվորի որևէ

216

հեղինակային իրավունք,

217

2. Հայցվորը խախտում է Պատասխանողի իրավունքները՝ օգտագործելով

218

Հայաստանում գրանցված Պատասխանողի ապրանքային նշաններին

219

նույնական նշաններ, և

220

3. Հայցվորն անբարեխիղճորեն մրցակցում է Պատասխանողի հետ հայկական

221

շուկայում:

222

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝

223

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԽԱՂ ՄՐՅՈՒՅԹԻ

224

ՎԵՐՈՊԳՐՅԱԼ ԽՆԴՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԲՈՒՈՐ ՓԱՍՏԵՐԸ ՀՈՐԻՆՎԱԾ ԵՆ:

225

ՈՐԵՎԷ ԻՐԱԿԱՆ ԴԵՊՔԻ ՀԵՏ ՀՆԱՐԱՎՈՐ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԱՀԱԿԱՆ

226

ԵՆ: